ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «29» դեկտեմբեր 2023թ. N 2678-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N 78-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 41.1 կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի փետրվարի 3-ի ««Սերտիֆիկացում և որակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնին Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» N 78-Ա հրամանով հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումները.

1) 4-րդ կետում «N 219-Ն որոշում» բառերից հետո լրացնել «(միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «2404 11 000» (տաքացվող ծխախոտով արտադրատեսակ) ծածկագրի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք),» բառերը:

2) 4-րդ կետից հետո լրացնել նոր 5-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 10-ի «Ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 155-Ն որոշում (միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «2404-ից» ծածկագրի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք):»:

2. Հիմք ընդունելով սույն հրամանի 1-ին կետը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-21 վկայականը վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական:

3. «Սերտիֆիկացում և որակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ միջև կնքված N PI003753 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետի ավարտից (N PI003753 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետն ավարտվում է 2024 թվականի փետրվարի 28-ը ներառյալ) 1 օր հետո էկոնոմիկայի նախարարությանը տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր:

4. Սույն հրամանի 1-ին կետով նախատեսված լրացումը գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Տերյանին:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

25/01/2024

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124